ԱՐԴԱՐԱ ԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԱՊԱՊԱ

ԱԼՖԱ ԵՒ ՕՄԵԳԱ

16+

Минас Минасян Ервандович

Արդարադատություն և ապագա
(Правосудие и будущее)

http://www.litres.ru/pages/biblio_book/?art=36058443
SelfPub; 2018

Аннотация

Ինչքան էլ անհնար լինի որևէ խնդրի լուծում ՝ Մարդը պարտավոր է ձգտել անել առավելագույնը :Այստեղ ներառվել են մեխանիզմներ՝ Ինչպես արդարադատությունը դարձնել մասսաների դաստիարակության միջոց:

Содержание

Մաս առաջին 5
Հոգեբանական վերլուծություն 5
Конец ознакомительного фрагмента. 10

Արդարադատություն և ապագա

Մաս առաջին

Հոգեբանական վերլուծություն

Մենք միշտ պայքարել ենք հանուն երջանկունթյան, մարդկային կյանքը բարձր դասելով բոլոր արժեքներից: Բայց կան նաև արժեքներ, որոնք ստիպում են կյանքն անարժեք համարել,կամ դարձնել գլխավորագույն ճանարհը՝ սեփական գաղափարն առաջ տանելու համար . . .

Չկա ոչ մի պետական համակարգ, որտեղ յուրաքանչյուր ոլորտ կարողանա աշխատել անսխալ : Բայց հարկավոր է հասկանալ, որ անթերիության սկզբունքը հերքելու իրողությունը թույլ չի տալիս չպայքարել մարդկային հարաբերություններում ներդաշնակության համար:

Ամենաթողության մեջ չապրելու համար են ստեղծվել օրենքները և համարվել են պետականության անվտանգության ու գոյության առաջնային հիմքերից մեկը: Թեև նրանց ակունքները գալիս են հեռավոր ու անհիշելի ժամանակներից, սակայն չեն կորցրել իրենց արդիականությունը: Նրանց բովանդակությունը փոխվել է, ինչ խոսք, բայց անփոփոխ է մնացել այն հոգևոր աղբյուրը, որից սնվել են նրանք:

Իսկ հիմա հասել ենք մի այնպիսի վերջնարդյունքի,

երբ կարծվում է, թե օրենքներից շատերն այնքան անփոխարինելի են ու հիմնարար,որ պատրաստ են դասվելու Աստվածային պատվիրանների շարքին: Նրանց օգտակարության մասին մեծ կասկածներ ունենալու համար , բավարար է նաև տեսնել, թե վերջիններս ինչ արդյունավետություն ունեն .

Ամենաառաջիններից մեկը,թերևս, այն է, երբ լիազորում ես քեզ՝ իբրև իրավատեր,ուրիշի կյանքը վերցնելու լիազորությունը, սեփական <եսը> ներկայացնելով որպես արդարադատություն իրականացնող սուբյեկտ:

Սպանությունն այն ոտնձգությունն է մարդկային կյանքի հանդեպ,որը վերադարձնելն անհնար է, և նա, ով խլել է այն, չի կարող վերադարձնել:

Բայց մարդկային մտածողության համաձայն, արդարադատությունը պահանջում է պատիժ,որն իրականացնելու համար առաջներում, փոխադարձաբար սպանում էին մեղավորին,ինչն անփոխարինելի հակազդող քայլ էր համարվում ընդդեմ ոճրագործության:

Ժամանակների փոփոխության հետ զուգընթաց, փոխվեց նաև մարդու աշխարհընկալումն ու պատկերացումները կյանքի արժեքի մասին:

Պատմական որոշ պահի հաղթանակ տարավ հումանիստական մտածողությունը, որի համար պայքարում էին հազարավոր մարդիկ հազարավոր տարիներ : Ճիշտ է, շատ համոզմունքների հետևորդներ մինչև հիմա փորձում են այդ հաղթանակները վերագրել իրենց՝ իբրև սեփական

գաղափարների արգասիք,բայց պատմությունն արդեն գրվել է,և արդեն այդ իրողություններին տեղեկացված անհատների մոտ իրականությունը այլակերպելն ու ձևախեղելը դարձել է ահնար . . .



Այդ իսկ առաջընթացից հետո, ընդունված է նորովի վերաբերվել նաև հանցանքին հաջորդող պատժամիջոցներին:

Պատիժը գուցե չէ, որ կրթում,կամ դաստիարակում է մարդուն,բայց ստիպում է մտածել իր արարքների վնասակարության մասին և անել տրամաբանական հետևություններ: Որոշների մոտ, այն չունի նույնիսկ այդ ուսուցողական ազդեցությունը,որը կարելի է բացատրել միայն հոգու,կամ գիտակցության մեջ բարոյական նորմերի արժեզրկմամբ:

Ինչպես պահպանել այդ կանոնների

հավասարազորությունը հասարակության բոլոր շերտերի մոտ, մնացել է բաց թեմա, իսկ լուծումներ,ցավոք քչերն են առաջարկում:

Գուցե ապագայի հանդեպ լավատեսությունն է ստիպում մտածել լավագույն լուծումների մասին, կամ խնդիրների մշտական ներկայությունը՝ որն առկախվում է հայրենասերի խղճին, բացելով պայքարի և հնարամտության շնորհի ճանապարհը:

Միայն հավատը մարդկային հարաբերություններում ներդաշնակության հասնելու հանդեպ բավական է,որպեսզի ոգեշնչի անհատներին մտածել նորարական լուծումների մասին և առաջարկել դրանք:

Գուցե՝ հանցանքները թվարկելիս ,սկսենք ամենաքստմնելիներից,որպեսզի հասնելով նվազ վտանգավորներին՝կարողանանք հաճելիորեն փաստել, թե դժվարին վելուծություններն արդեն անցյալում են:

Երբ խլում ես մեկի կյանքը, այլևս չես կարող այն վերադարձնել . . . Այն չվերականգնվող արժեք է: Անշրջելի են նրա հետ խաղալ փորձողների գործողությունները: Նա,ով արժեզրկում է անգին արժեքները, թույլ է տալիս իրեն,կամ ուրիշներին գնալ բնության օրենքների դեմ. որովհետև ամբողջ կենդանական աշխարհում չկա մի ինդիվիդուում,որը հանուն սեփական < ես> ի քմահաճույքների իրեն իրավազոր համարի տնօրինել մեկ ուրիշի կյանքը. Նրանք գործում են համաձայն իրենց տրված բնազդների և չեն շեղվում այդ գենետիկ

հրահանգից:

Իսկ մարդը լիազորել է իրեն չտրված իշխանությամբ,՝խաթարելով արդեն անհաշվելի ժամանակներից եկող խաղաղ ապրելակերպի պատկերը:

Конец ознакомительного фрагмента.

Текст предоставлен ООО «ЛитРес».

Прочитайте эту книгу целиком, купив полную легальную версию на ЛитРес.

Безопасно оплатить книгу можно банковской картой Visa, MasterCard, Maestro, со счета мобильного телефона, с платежного терминала, в салоне МТС или Связной, через PayPal, WebMoney, Яндекс.Деньги, QIWI Кошелек, бонусными картами или другим удобным Вам способом.